ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

16.05.2022թ. N 02/16.4/4918-2022

«Գազկոմշին» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերության տնօրեն
պարոն Մաքսիմ ՄԻՍԱԿՅԱՆԻՆ
էլ. փոստի հասցե՝ 'gascomshin@gmail.com'

2022 թվականի մայիսի 11-ի
N 27 գրություն

Հարգելի պարոն Միսակյան

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<Գազկոմշին>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2020 թվականի սեպտեմբերի 29-ին կնքվել է ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման աշխատանքների կատարման N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/12 գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) 210 008 239.49 (երկու հարյուր տասը միլիոն ութ հազար երկու հարյուր երեսունինն ամբողջ քառասունինը) ՀՀ դրամի չափով:

ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 7-ի N 469-Ն որոշմամբ նշված ծրագրի իրականացման համար նախատեսվել է 176 702 400 (մեկ հարյուր յոթանասունվեց միլիոն յոթ հարյուր երկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամ գումար:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 8.13 կետի պահանջների՝ Պատվիրատուն 2022 թվականի ապրիլի 19-ին սահմանված կարգով ծանուցել է Ընկերությանը 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 2022 թվականի մայիսի 11-ը ներառյալ) համաձայնագրի միակողմանի հաստատված օրինակները, որակավորման և պայմանագրի ապահովումները բանկային երաշխիքի ձևով ներկայացնելու մասին (2021 թվականին ներկայացված N 4394-02 և N 4395-02 բանկային երաշխիքների ժամկետները լրացել են 2022 թվականի փետրվարի 7-ին):

Ընկերության կողմից մինչ օրս չեն ներկայացվել համաձայնագիրը և պայմանագրի և որակավորման ապահովումների բանկային երաշխիքները:

Ընկերության կողմից Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 8.13 կետի պահանջները խախտելու հիմքով Պատվիրատուն Ընկերության հետ կնքված Պայմանագիրը 2022 թվականի մայիսի 13-ից միակողմանիորեն լուծում է:

Համաձայն Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին սույն ծանուցումը կտեղադրվի www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում:

Հարգանքով՝

պարտականությունները կատարող

X

ԿԱՐԵՆ ԱՆՏՈՆՅԱՆ

Signed by: ANTONYAN KAREN 1810760100

ՀՀ ՔԿ ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական
հաշվառման վարչության պետ՝ Հասմիկ Բաղինյան
Հեռ: 011621821

Գնումների կազմակերպման
բաժնի պետ՝ Արայիկ Մնացականյան
Եռ: 011621722